ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԹԵՍՏ

ՀՐԱՀԱՆԳ

Ներկայացվում է քննության թեստի էլեկտրոնային բուկլետը: Թեստի առավելագույն միավորը 70 է:

Թեստը լրացնելու համար տրվում է 4 ժամ:

Ուշադրությո՛ւն. անհասկանալի ձեռագրով աշխատանքը չի ստուգվի:

Հաջորդ էջ անցնելու և հետ դառնալու համար կարող եք օգտվել ստեղնաշարի այն կոճակներից, որոնց վրա սլաքներ են պատկերված

Մաղթում ենք հաջողություն:

Հայոց լեզու (35 միավոր)

(1) 1. **Կարդացե՛ք նախադասությունը.** *Մարդիկ ամեն կերպ աշխատում են պահպանել տրադիցիան՝ տարեցտարի ավելի ու ավելի գունագեղ պատմություններով զարդարելով այն:*

Տվյալ նախադասության մեջ գործածված է՝

ա) Բարբառաբանություն:

բ) Հնաբանություն:

գ) Նորաբանություն:

դ) Օտարաբանություն:

(1) **2. Պարզե՛ք՝ ո՞ր նախադասության մեջ հարանուններ կան:**

ա) Հաստաբուն ծառերի տակ խաշամը փտել էր, իսկ փարթամ թփերի վրա փթթել էին կոկոնները պատռած ծաղիկները:

բ) Մարտ ամիսն էր, երբ նա գնաց բանակ և մասնակցեց թեժ մարտերին՝ հաղթանակի դափնին վաստակած վերադառնալով տուն:

գ) Նոսրացող մշուշը բացում էր գարնանային բնության հմայքը, իսկ արևի ճառագայթները աստիճանաբար ավելացնում էին տեսարանի թովչանքը:

դ) Վճռական պահերին Նանեն անդրդվելի էր մնում, մինչդեռ նրա աշխատակիցները գրեթե միշտ երկմտում էին՝ կորցնելով վստահությունն ու հույսը:

(1) **3. Ո՞ր դարձվածքին <u>չի համապատասխանում</u> տվյալ իմաստը:**

ա) Գազան կտրել – կատաղել:

բ) Երկաթե գավազան – բռնապետություն:

գ) Ծովային գայլ – անվախ մարդ:

դ) Սիրտը կախ – անտրամադիր:

(1) **4. Պարզե՛ք՝ թվարկվածներից ո՞ր բացատրությունն է ճիշտ:**

ա) Բառին և արմատին լրացուցիչ իմաստ տվող և նոր բառ կազմող բաղադրիչը կոչվում է ածանց:

բ) Բառին և արմատին լրացուցիչ իմաստ տվող և նոր բառ կազմող բաղադրիչը կոչվում է բաղադրյալ հիմք:

գ) Բառին և արմատին լրացուցիչ իմաստ տվող և նոր բառ կազմող բաղադրիչը կոչվում է բառակազմական հիմք:

դ) Բառին և արմատին լրացուցիչ իմաստ տվող և նոր բառ կազմող բաղադրիչը կոչվում է վերջավորություն:

(1) **5. Պարզե՛ք՝ թվարկվածներից ո՞ր բառի մեջ <u>չի արտասանվում</u> «հ» հնչյունը:**

ա) Անահիտ:

բ) Արհամարհել:

գ) Բժշկուհի:

դ) Հրահանգ:

(1) **6. Կարդացե՛ք նախադասությունը.** *Կանոնակարգում արված փոփոխությունն ընդունեց նախագահը և վարչական միավորի 50 անդամները:*

Տրված նախադասության մեջ խախտված է.

ա) Խոնարհման կարգը:

բ) Կետադրության կարգը:

գ) Համաձայնության կարգը:

դ) Հոլովման կարգը:

(1) **7. Թվարկվածներից ո՞րն է բայի ելակետային՝ սկզբնական ձևը:**

ա) Անորոշ դերբայ:

բ) Ենթակայական դերբայ:

գ) Համակատար դերբայ:

դ) Հարակատար դերբայ:

(1) **8. Պարզե՛ք՝ ո՞ր դրույթն է ճիշտ:**

ա) Միության գծիկով են գրվում կրկնավոր հարադրությունները, որոնց բաղադրիչները հոդակապով են հարադրված:

բ) Միության գծիկով են գրվում կրկնավոր հարադրությունները, որոնց բաղադրիչները նախդիրներով են հարադրված:

գ) Միության գծիկով են գրվում կրկնավոր հարադրությունները, որոնց բաղադրիչները շաղկապով են հարադրված:

դ) Միության գծիկով են գրվում կրկնավոր հարադրությունները, որոնց բաղադրիչներից մեկը հնչյունափոխված է:

(1) **9. Թվարկվածներից ո՞րն է անկանոն բայ.**

ա) Խաղալ:

բ) Խոսել:

գ) Կարդալ:

դ) Տեսնել:

(1) 10. **Պարզե՛ք՝ ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը մակբայ:**

ա) Նույն ճանապարհով, նույն դժվարությունների միջով մեզանից **առաջ** մեր պապերն են անցել:

բ) Որդին նստել էր հոր մահճակալի **առաջ** ու կարոտով լի հայացքը հառել էր նրա դեմքին:

գ) Չամբարը դուրս պրծավ դռնից ու հետքի հոտն առնելով ուրախ-ուրախ **առաջ** վազեց:

դ) Տան մոտ տարիներ **առաջ** տնկած բարդին մեծացել ու իր շվաքի տակ էր առել բակը:

(2) 11. **Աշակերտը գրել է.** *Քոլեջը նյութա-տեխնիկական առումով ապահովված է, սակայն որոշ ոլորտներում բարելավման անհրաժեշտություն կա։*

- Ցո՛ւյց տվեք նրան՝ ինչպիսի սխալ է թույլ տրված նախադասության մեջ։
- Բացատրե՛ք աշակերտին՝ ինչ պետք է իմանա, որպեսզի նմանատիպ սխալ թույլ չտա։

(2) **12. Աշակերտը գրել է.** *Իմաստունը ցույն առավ ու թափառել սկսեց տարբեր ժողովուրդների հայրենիքներում, կարեկցեց խեղճ ու տկար մարդուց:*

- Ցո՛ւյց տվեք նրան՝ ինչպիսի սխալ է թույլ տրված նախադասության մեջ:
- Բացատրե՛ք աշակերտին՝ ինչ պետք է իմանա, որպեսզի նմանատիպ սխալ թույլ չտա:

(4) 13. **Դուք պետք է աշակերտներին բացատրեք մեծատառերի ուղղագրությունը և դրանց կիրառման դեպքերը:**

I – Նշե՛ք մեծատառերի ուղղագրության վերաբերյալ երկու-երեք կանոն, որոնց պետք է տիրապետեն աշակերտները:

II – Բերե՛ք մեծատառերի ճիշտ կիրառության օրինակներ՝ ըստ նշված կանոնների:

(7) 14. **Կարդացե՛ք *Արմեն Օհանյանի հետ հարցազրույցից բերված հատվածը.***

Արվեստի միջոցով թույլն ուժ է ստանում, ուժեղը՝ թուլանալու հնարավորություն: Մեզ շրջապատող բռնությունը, անազատությունը, հուսալքվածությունը, աղքատությունն անգամ կարող են հաղթահարվել արվեստով: Արվեստն ամենակարող է, երբ հասարակությունը հավատում է իր ուժին և անկարող է, երբ մատնված է անտարբերության:

I – Ո՞րն է այս տեքստի բուն ասելիքը:

II – Ձևակերպե՛ք մեկական փաստարկ՝ մեկը տեքստում ներկայացված կարծիքը հաստատելու, մյուսը՝ հերքելու համար:

III – Շարադրե՛ք Ձեր դատողություններն այն մասին, թե որ փաստարկն է Ձեզ համար ընդունելի և ինչու:

Հաշվի՛ առեք, որ այս առաջադրանքի պատասխաններում Ձեր թույլ տված ուղղագրական, կետադրական, քերականական կամ ոճաբանական սխալի համար 1 միավոր կհանվի:

(10) 15. **Կարդացե՛ք աշակերտի գրավոր աշխատանքը և հետևե՛ք հետևյալ հրահանգներին.**

I – Գնահատե՛ք աշակերտի աշխատանքը՝ ըստ I չափանիշի, գրե՛ք համապատասխան միավոր և բնագրից բերե՛ք համապատասխան օրինակ(ներ)։

II – Գնահատե՛ք աշակերտի աշխատանքը՝ ըստ II չափանիշի, գրե՛ք համապատասխան միավոր և բնագրից բերե՛ք համապատասխան օրինակ(ներ)։

III – 1. Գնահատե՛ք աշակերտի աշխատանքը՝ ըստ III չափանիշի, գրե՛ք համապատասխան միավոր և բնագրից բերե՛ք համապատասխան օրինակներ։

2. Որոշե՛ք յուրաքանչյուր սխալի տեսակը (ուղղագրական, ձևաբանական, կետադրական, շարահյուսական)։

Գնահատման չափանիշներ

N	*Չափանիշներ*	*Չափանիշների պարզաբանում*	*Միավոր*
I	Դատողության հիմնավորում (փաստարկ և եզրակացություն)	ա) Դատողությունը հստակ փաստարկված է, փաստարկները հիմնավորված են համապատասխան օրինակներով: բ) Դատողությունը մասամբ է փաստարկված, հիմնավորված չէ համապատասխան օրինակներով կամ թույլ է տրված փաստացի սխալ: գ) Տեքստը ճիշտ չի հասկացվել, դատողությունը համոզիչ չէ, օրինակները նույնպես չեն համապատասխանում դատողությանը:	2 1 0
II	Բառապաշար և ոճ	ա) Միտքը ճիշտ և հստակ է ձևակերպված, ոճաբանական առումով սխալներ չկան: բ) Միտքը ճիշտ է ձևակերպված, բայց բառապաշարն աղքատ է, կամ հանդիպում են բառապաշարի հետ կապված և/կամ ոճաբանական թերություններ: գ) Միտքը հիմնականում հասկանալի է, բայց գրվածքի ոճը խրթին է, հանդիպում են բառագործածության սխալներ:	2 1 0
III	Ուղղագրություն, քերականություն, կետադրություն	ա) Այս կարգի սխալների թիվը երեքից ավելի չէ: բ) Այս կարգի սխալների թիվը վեցից ավելի չէ: գ) Այս կարգի սխալների թիվը վեցից ավելի է:	2 1 0

Աշակերտին տրված առաջադրանք.

Կա կարծիք, որ բարձրագույն կրթություն ստանալը պարտադիր չէ, ժամանակակից աշխարհում արհեստագործությունը և միջին մասնագիտական կրթությունն ավելի պահանջված են:

Փաստարկված դատողությամբ հաստատե՛ք կամ հերքե՛ք բերված կարծիքը:

Աշակերտի շարադրությունը

Ասում են, որ բարձրագույն կրթություն ստանալը պարտադիր չէ, որովհետև ժամանակակից աշխարհում ավելի ու ավելի մեծ պահանջարկ ունի արհեստագործությունը և միջին մասնագիտական կրթությունը: Շատ ոլորտներում գործատուները նախնտրում են այն աշխատակիցներին, որոնք տիրապետում են գործնական հմտությունների և կարողանում են առավել արդյունավետ և արագ կատարել իրենց աշխատանքը:

Միջին մասնագիտական կրթությունն ավելի կարճ ժամանակում կոնկրետ մասնագիտություն ձեռք բերելու և աշխատել սկսելու հնարավորություն է տալիս: Այն հաճախ ավելի մատչելի է ֆինանսական առումով և ավելի հասանելի, քան բարձրագույն կրթությունը: Հաճախ երիտասարդները հենց այս ճանապարհն են ընտրում, փորձելով հնարավորինս շուտ դառնալ ինքնուրույն և ունենալ կայուն եկամուտ:

Սակայն, իմ կարծիքով, բարձրագույն կրթությունը կարևոր է բոլորի համար: Այն ոչ միայն տալիս է գիտելիքներ, այլ ձևավորում է քննադատական մտածողությունը և առողջ աշխարհայացքը: Բարձրագույն կրթություն ստացած մարդը հաճախ ավելի շատ հնարավորություններ և կայուն ապագայի հեռանկար ունի: Չնայած արհեստագործական հմտությունների և միջին մասնագիտական կրթության պահանջարկին, բարձրագույն կրթության պահանջը և կարևորությունը շարունակում են հրատապ մնալ: Բարձրագույն կրթություն ստանալու ճանապարհին մարդը նաև ձեռք է բերում նոր ծանոթություններ և մասնագիտական կապեր, որոնք կարող են մեծ դեր ունենալ ապագա հաջողության գործին: Համալսարանում ուսանողները սովորում են աշխատել թիմում, պաշտպանել իրենց գաղափարները, արտահայտել իրենց կարծիքը, դառնում են ավելի ինքնուրույն: Այս փորձը նրանց նախապատրաստում է կյանքի տարբեր իրավիճակում ծառացող մարտահրավերներին դիմակայելու և նպաստում է անձնական զարգացմանը:

Հայ գրականություն (20 միավոր)

(1) 16. **Տրված բնութագրումներից ո՞րն է վերաբերում 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությանը»:**

ա) Այն ներկայացնում է Խոսրով Կոտակի գահակալությունից մինչև 387 թվական ընկած ժամանակահատվածը:

բ) Այն ներկայացնում է հայ իշխանական տոհմերի ծագումնաբանությունը և նրանց պատմությունը:

գ) Այն ներկայացնում է հայոց դարձի և Տրդատ Գ թագավորի գահակալության վերջին տարիների պատմությունը:

դ) Այն ներկայացնում է հարյուր տարվա պատմություն՝ սկսած Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանումից:

(1) **17. «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք տեքստում բանասացը ո՞ր հերոսին չի ասում «ողորմի»:**

ա) Արտատեր պառավին:

բ) Դեղձուն Ծամին:

գ) Իսմիլ խաթունին:

դ) Չմշկիկ Սուլթանին:

(1) **18. Ի՞նչ է խորհրդանշում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի յուրաքանչյուր գլխի սկզբում կրկնվող *«Ի խորոց սրտի խոսք Աստուծո հետ»* արտահայտությունը:**

ա) Այն մատնանշում է մարդու և Աստծո միջև անկեղծ, անմիջական երկխոսությունը և հոգևոր կապը:

բ) Այն ուղղակիորեն հուշում է ընթերցողին, որ տվյալ գլուխը պետք է ընթերցվի աղոթելիս:

գ) Հեղինակը փորձում է ավետարանական օրինակների միջոցով ապացուցել Աստծո գոյությունը:

դ) Հեղինակն ընդգծում է մարդու և Աստծո միջև հեռավորությունը, որի պատճառով մարդու ձայնը չի հասնում Արարչին:

(1) 19. **Ո՞ր պատմիչն է տեղեկություններ հաղորդում Մխիթար Գոշի անձնական և ստեղծագործական կյանքի մասին։**

ա) Գրիգոր Ակնեցի։

բ) Գրիգոր Խլաթեցի։

գ) Կիրակոս Գանձակեցի։

դ) Վանական Վարդապետ։

(1) **20. Ըստ կենսագրական տվյալների՝ Սայաթ-Նովայի հայրը Հալեպից Վրաստան գաղթած մահտեսի Կարապետն էր:**

Ի՞նչ է նշանակում «մահտեսի»:

ա) Այն միջնադարյան պատվավոր կոչում էր, որը շնորհվում էր արքունիքում ծառայող բարձրաստիճան դպիրներին ու աշուղներին:

բ) Այս կոչումը տրվում էր աշուղական մրցույթներում հաղթած և «վարպետի» աստիճան ստացած աշուղներին:

գ) Այսպես էին անվանում Երուսաղեմ ուխտի գնացած և Քրիստոսի գերեզմանին երկրպագած քրիստոնյաներին:

դ) Այսպես էին անվանում քրիստոնյաներին, որոնք հրաժարվում էին աշխարհիկ կյանքից և փակվում էին հեռավոր մենաստաններում:

(1) 21. Թվարկվածներից որի՞ն է բնութագրում երկու քառատողից և երկու եռատողից կամ երեք քառատողից և մեկ ամփոփիչ երկտողից բաղկացած կառուցվածքը:

ա) Գազել:

բ) Կաֆա:

գ) Շայիր:

դ) Սոնետ:

(1) **22. Միքայել Նալբանդյանն իր գրվածքները հաճախ հրատարակում էր տարբեր կեղծանուններով: Ի՞նչն է եղել դրա պատճառը: Ո՞ր փաստարկն է ճիշտ:**

ա) Նա անձնական թշնամանքի մեջ էր կղերական հասարակության հետ:

բ) Նա հալածվում էր ցարական իշխանության կողմից:

գ) Նա չէր ցանկանում լինել հանրաճանաչ հասարակական գրող:

դ) Նա չէր ցանկանում, որ հակառակորդները յուրացնեին իր գրվածքները:

(1) **23. Ի՞նչ է խորհրդանշում Վարդանի երազը Ռաֆֆու «Խենթը» վեպի վերջաբանում:**

ա) Այն արտահայտում է հայրենիքի ծանր վիճակի հետ կապված հուսահատությունը:

բ) Այն արտացոլում է ազատագրված և քաղաքակիրթ Հայաստանի ապագան:

գ) Այն ներկայացնում է հայ ժողովրդի բարեկեցիկ ապագան օտար երկնքի տակ:

դ) Այն ցույց է տալիս Հայաստանի տնտեսական վերելքն օտար ուժերի օգնությամբ:

(1) **24. Ո՞ւմ է նվիրված Միսաք Մեծարեցնի «Լուռ, մարմարակերտ դամբանին խորեն» սոնետը:**

ա) Եղիա Տեմիրճիպաշյանին:

բ) Հովհաննես Երզնկացուն:

գ) Ղունկիանոս Կարնեցուն:

դ) Պետրոս Դուրյանին:

(1) **25. Ալեքսանդր Շիրվանզադեի «Արամբին» ստեղծագործությունը թեմատիկ առումով ո՞ր ստեղծագործությանն է մոտ:**

ա) «Արսեն Դիմաքսյան»:

բ) «Արտիստը»:

գ) «Նամուս»:

դ) «Չար ոգի»:

(1) **26. Ո՞ր պնդումն է վերաբերում Միսաք Մեծարենցին:**

ա) Աշխարհաբարով գրված նրա բանաստեղծությունները սուր քննադատության են արժանանում ժամանակի մտավորականների կողմից:

բ) Գյուղի թեմայով գրված նրա բանաստեղծություններում արտացոլվում են գեղջուկի սոցիալական կյանքի ծանր պայմանները:

գ) Նա գովերգում է հացի արարումն ու պատկերում է բնության ու աշխատավորի անխզելի կապն ու ներդաշնակությունը:

դ) Նրա բանաստեղծություններում բազմաթիվ նրբերանգներով իր արձագանքն է գտել հեղինակի անձնական կյանքի դրաման:

(1) **27. Ստորև թվարկվածներից ո՞րն է Վահան Տերյանի առաջին բանաստեղծական ժողովածուն:**

ա) «Գիշեր և հուշեր»:

բ) «Երկիր Նաիրի»:

գ) «Մթնշաղի անուրջներ»:

դ) «Ոսկի հեքիաթ»:

(1) **28. Գրական ո՞ր ժանրի ստեղծագործություն է Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրին»:**

ա) Բալլադ:

բ) Դրամա:

գ) Պոեմ:

դ) Վեպ:

(1) **29. Ի՞նչ զուգահեռ է անցկացվում Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել»-ի և Դանթե Ալիգիերիի «Աստվածային կատակերգության» միջև:**

ա) Երկու պոեմներն էլ բաժանվում են մարդկությանն առ կատարելագործում տանող երեք մասի՝ «Դժոխք», «Քավարան» և «Դրախտ»:

բ) Երկու պոեմներում էլ արծարծված են սիրային սյուժեներ՝ կորուստների, ողբի հետ կապված տեսարաններով:

գ) Երկու պոեմներում էլ հերոսներն անցնում են ֆիզիկական և հոգևոր տանջանքների իրական և երևակայական «դժոխքի» միջով:

դ) Երկու պոեմներում էլ հերոսները տեսնում են տեսիլքներ, որոնք նրանց ուղեկցում են ռազմաճակատի գծով:

(1) **30. Թվարկվածներից ո՞րն է Վահան Թոթովենցի ինքնակենսագրական երկը։**

ա) «Ծիրանի ծառ»։

բ) «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»։

գ) «Հրկիզված թղթեր»։

դ) «Նոր Բյուզանդիոն»։

(1) **31. Սյուժեի առումով ի՞նչ ընդհանրություններ ունեն Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարերը» և Մկրտիչ Արմենի «Պատվիրեցին հանձնել ձեզ» ստեղծագործությունները:**

ա) Երկու ստեղծագործություններն էլ անդրադառնում են քաղաքական հալածանքներին և աքսորին:

բ) Երկու ստեղծագործություններն էլ կառուցված են ժողովրդական մոտիվների և ազգային ավանդույթների շուրջ:

գ) Երկու ստեղծագործություններում էլ առաջ են քաշված բուրժուազիայի խնդիրը և սոցիալական անարդարությունը:

դ) Երկու ստեղծագործություններում էլ գլխավոր շեշտադրումն արվում է քաղաքային կյանքի և բնության նկարագրության վրա:

(1) 32. **Ու՞մ է գնահատել Սուրեն Աղաբաբյանը հետևյալ խոսքերով.** *«Նրա մեջ բոցկլտում էր մաշտոցյան լեզվի կրակը, նրա երակներում հոսում էր Նարեկացու և Քուչակի արյունը, իսկ սրտի միջով անցնում էր Խաչատուր Աբովյանի վերքը: Նա տիրապետում էր Սասունցի Դավթի ուժին, սակայն նրա պոեզիայում ծաղկում էր մոր ծաղիկը, որի անունը քնքշություն է: Նրա քնարը պատվով կրում էր Կոմիտասի կարոտը և Մարտիրոս Սարյանի գույների հարմոնիան»:*

ա) Հովհաննես Շիրազին:

բ) Մարո Մարգարյանին:

գ) Սիլվա Կապուտիկյանին:

դ) Վահագն Դավթյանին:

(1) **33. Վախթանգ Անանյանի ստեղծագործությունը գնահատելու համար ո՞ր դրույթն է ճիշտ:**

ա) Գրողը հաճախ է անդրադառնում կենսական տարբեր իրավիճակների, ինչը հիմք է ստեղծում երգիծական ժանրի զարգացման համար:

բ) Գրողի ստեղծագործության մեջ կենտրոնական տեղ են զբաղեցնում բնության տեսարանները և սոցիալական անհավասարությունը:

գ) Գրողն աչքի է ընկնում իր արկածային ստեղծագործություններով և բնության մասին գրված պատմվածքներով:

դ) Գրողն առաջինն է հայ գրականության մեջ, ով կենդանիների կերպարները ներկայացրել է փոխաբերական իմաստով:

(1) **34. Կարդացե՛ք Գևորգ Էմինի «Զգույշ խոսիր Հայաստանում» բանաստեղծությունից բերված հատվածը.**

«Իսկ թե չար են՝ լեռները մեր,
Հրաբխի բնե՛րն անմեռ,
Որ լռել են, բայց չե՛ն հանգել,
Քեզ լավայո՛վ կարձագանքեն,
Որ լեռնե՛ր է քշում-տանում...»:

Փոխաբերական իմաստով ի՞նչ է արտահայտում «Որ լռել են, բայց չե՛ն հանգել» տողը:

ա) Բնության անձեռնմխելիություն:

բ) Կամավոր հնազանդություն:

գ) Հայրենաբաղձություն:

դ) Մշտարթուն զգոնություն:

(1) **35. Միլվա Կապուտիկյանը «Մտորումներ ճանապարհի կեսին» բանաստեղծությունը գրելիս համարում էր, որ.**

ա) Ապագա կյանքը փրկելու և շարունակելու համար անհրաժեշտ է հիշել անցած ճանապարհը։

բ) Ժամանակակից կյանքի փոխարեն մենք կարող ենք հպարտանալ միայն անցյալի պատմությամբ։

գ) Հաջողության հասնելու համար մարդիկ պետք է հրաժարվեն անցյալից և շարունակեն ճանապարհը։

դ) Մշակույթի պահպանումն ու զարգացումը հնարավոր է բացառապես սփյուռքի ներուժի միջոցով։

Գեղարվեստական տեքստի ըմբռնում (15 միավոր)

Ուշադիր կարդացե՛ք Վիլյամ Սարոյանի «Հայրենի տուն, հայրենի տուն» ստեղծագործությունը.

Բոլոր անփոփոխ բաներից՝ քաղաքը, որտեղ աչք ես բացել, ամենաանփոփոխն է: Միշտ միապաղաղ վայր է դա, բայց միևնույն ժամանակ, երբ մեծանում ես ու փոխվում, հեռանում, հիշում, վերադառնում և նորից հեռանում՝ դա անսպառելի ամենահարուստ վայրերից մեկն է: Եվ այսուհանդերձ, թե ինչ կա՝ բան չկա այնտեղ, բացի գորշ ու տաղտկալի, միայնակ, կորսված բաներից, և երբեք չես հասկանում, ամեն անգամ երբ ետ ես գալիս, թե այդ ի՞նչն է, որն այդպես ամուր կապում է քեզ իրեն:

Ի՞նչ է դա, եթե ոչ մի սովորական ամերիկյան քաղաք, որը ոչ մի բանով չի տարբերվում տասը հազար այլ քաղաքներից, որտեղ ինչ-որ մի ժամանակ ծնվել են երեսուն հազար ուրիշ մարդիկ և որտեղ այդ մարդիկ ինչ-որ ժամանակ իրենց մանկությունն ու երիտասարդությունն են իմացել ու հեռացել են, կամ՝ մնացել այդտեղ:

Ինչո՞վ է առավել ինչ-որ մի վայրից, ուր երկու կամ երեք տասնյակ մարդ հանգստացել են ինչ-որ տարվա մի օր ու մնացել, և ուրիշներն են եկել ու մնացել, և էլի ուրիշներն են եկել ու չեն մնացել:

Ինչո՞վ է առավել, բացի այն երկու դեպոյից՝ քաղաքի երկու ծայրերում՝ արևելքում ու արևմուտքում, մեջտեղում՝ քաղաքը, շուրջբոլորը տներ ու փողոցներ, ուր բնակիչների ականջից երբեք չի վրիպում գնացքների գալն ու գնալը:

Ինչո՞վ է առավել աշխարհի սկզբից՝ մոտալուտ ձմեռով:

Ինչ-որ բանով առավե՞լ է, քան արթնանալդ մի առավոտյան ու այդ վայրում սեփական ներկայությունդ իմանալը:

Կամ առավե՞լ է դպրոցում աշակերտական նստարանին նստելուց ու երազելուց, որ թվաբանության ամենապարզ մի դասից հասկանաս այդ ամենի ով կամ ինչ լինելը։

Առավե՞լ է ինչ-որ մի տեղից, ուր ի հայտ են եկել փողոցներ, ոչ երազում, ու դու հայտնվել ես այնտեղ ու քայլել։

Առավե՞լ է, քան կարոտը, ամառն ու ձմեռը։ Միայնությունը, չգիտե՞ս, վերջ չի ունենալու։

Առավե՞լ է, քան գեղեցկություն տեսնելը փոքրիկ աղջկա դեմքին և պաշտելն այն ու չիմանալը, որ այդ դեմքի լույսը երբեք դուրս չի գալու քո երազներից։

Փոքր քաղաքը, իսկապես, ինչ-որ վա՞յր է աշխարհում, թե՞ ավելին չէ, քան տղայի երազանքից դուրս բերված ինչ-որ բան։ Ամեն բանի հանդեպ ունեցած իր սիրո՞ւց է դուրս բերված։ Ամեն բանի՝ որը վեր է փոշո՞ւց, ժանգի՞ց ու քայքայումի՞ց, գազաթի՞ց ու կողմերի՞ց, վեր՝ հատակի՞ց. դուրսը, շուրջը, վերը, տակը, ներսը։

Տղայի հասկանա՞լն է, որ թեև սա տխրորեն ճգնելու մի վայր է, տխուր մարդկանց, ովքեր փորձում են լավագույնն անել, դա նաև մի վայր է, ուր երևացող բաների ու իմացած մարդկանց միջով շարժվում է այն ռասսան, որը չի ծնվել, և որ այդ կառուցվածքի ու փողոցների ճչացող վշտի մեջ է գոյացել ամբողջ վեր հառնող աշխարհը։ Ռունգերին հասնող սուրբ բո՞ւյրն է դա, քրտինքի ու փտածի հոտից վեր՝ բույրը բոլոր այն բաների, որոնցում միայն հաճելին է և ուր տեղ չունի մահը։ Ականջներին հասնող լռության անշարժությո՞ւնը, որ ամեն բանի մեջ է ու շուրջը։ Մեղմ, լսելի լռությո՞ւնը՝ շարունակական սկզբի։

Կրկին հայրենի քաղաք եմ վերադարձել։ Անցած գիշեր հասկացա, որ այս քաղաքի ինչ լինելու մեծ մասը, ուր էլ որ գնամ՝ գիշերային երկինքն է. ջինջ, հանկարծահաս ու անսահմանորեն մեծ։

Այսօր վաղ առավոտյան Վենտուրա պողոտայով իջա քաղաք, անցա փողոցներով, որտեղով քայլել էի քսան տարի առաջ։ Ոչինչ չի փոխվել, բացի մի քանի շենքերի վրայի մի քանի նշաններից, մի քանի ծառ է վերացել, մի քանի նորն՝ ավելացել, մի քանիսն ավելի են մեծացել, տներից մեկը քանդվել է, նախամուտքը՝ փտել, բայց մեջն էլի ապրող կա։ Լռությունը նույնն է, ու նույն ձև է խզվում, ինչպես քսան տարի առաջ՝ գնացքների գալ ու գնալով։

Վենտուրա պողոտայից մինչև Թուլեր փողոց Սանտա Ֆե երկաթուղու ռելսերով քայլեցի, և հյուսիսից հարավ գնացող բեռնատար գնացքը եկավ։ Երբ հասավ ինձ, չէի հավատում, թե տարիներն անցել էին, և գիտեի, որ մի մարդ հեռանալու է այս աշխարհից, կյանքում երբևէ ու ինքն իր մեջ առանց գտնելու այն մեծությունն ու ամբողջականությունը, որն իր բոլոր ձգտումների պատճառն էր, երբ դեռ տասը տարեկան էլ չկար։

Երբ գնացքն անցնում էր կողքովս՝ գիտեի, որ մի մարդ հեռանալու է, առանց երբևէ որևէ տեղ հասնելու, և որ երբեք հաճելի այդ պատկերը, որ վեր է ամեն ինչից՝ վերը, վարը ու ներսը եղած բոլոր ծայրերից ու եզրերից, չի դադարելու իր երազներում լինել, քանի դեռ ինքն իսկապես մեկը չէ, ով այլևս կենդանի չէ և ով այլևս բոլորովին չի քնում։

ՀՐԱՀԱՆԳ

Առաջադրանքը կատարելու համար ուշադի՛ր կարդացեք տեքստը: Հարցերին սկսե՛ք պատասխանել այն ժամանակ, երբ տեքստի բովանդակությունն ամբողջովին հասկանալի կլինի:

Տրված պատասխաններից ընտրե՛ք միայն մեկ պատասխան և պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում նշե՛ք «X» նշանով:

(1) 36. **Ինչպե՞ս է հեղինակը նկարագրում հայրենի քաղաքը այնտեղ առկա «գորշ ու տաղտկալի, միայնակ, կորսված բաների» ֆոնին:**

ա) Որպես աղքատ և անհեռանկար մի վայր, որտեղ ժամանակը կանգ է առել:

բ) Որպես մի միջավայր, որը խոչընդոտում է մարդու անհատական աճին:

գ) Որպես մի վայր՝ հարուստ ավանդույթներով, որոնք նա պարտավոր է պահպանել:

դ) Որպես մի վայր, որի հետ մարդն անխզելիորեն կապված է անցյալի հուշերով:

(1) **37. Տեքստի ընդհանուր բովանդակությունից ելնելով՝ ի՞նչ է ուզում ասել հեղինակը հետևյալ արտահայտությամբ.** *«Ի՞նչ է դա, եթե ոչ մի սովորական ամերիկյան քաղաք, որը ոչ մի բանով չի տարբերվում տասը հազար այլ քաղաքներից»:*

ա) Այն, որ ամերիկյան քաղաքների կարևորությունը գնահատվում է այնտեղ բնակվող մարդկանց քանակով:

բ) Այն, որ հայրենի քաղաքը հազարավոր ամերիկյան քաղաքներից մեկն է և ոչ մի բանով աչքի չի ընկնում:

գ) Այն, որ հայրենի քաղաքը հազարավոր վայրերից մեկը լինելով հանդերձ բացառիկ է մարդու համար:

դ) Այն, որ սովորական ամերիկյան քաղաքները չունեն պատմական և մշակութային արժեքներ:

(1) **38. Ի՞նչ փոխհարաբերություն կա մարդու և հայրենի տան, հայրենի միջավայրի միջև:**

ա) Հայրենի տանը, հայրենի միջավայրում մնալն ավելի լավ է, քան այնտեղից հեռանալը, քանի որ հեռացողները կտրվում են իրենց արմատներից:

բ) Հայրենի տնից և հայրենի միջավայրից են սկիզբ առնում մարդու լավագույն հատկանիշները, առաջին հերթին՝ սիրելու ընդունակությունը:

գ) Մարդկանց կյանքի վրա հայրենի տունը և հայրենի միջավայրը չեն կարող ազդել, քանի որ մարդիկ, միևնույն է, լքում են դրանք:

դ) Մարդկանց համար հայրենի տունը և հայրենի միջավայրը դառնում են օտար, երբ այնտեղ շատ օտարերկրյա հանգստացողներ են ժամանում:

(1) **39. Ինչո՞ւ է դասին նստած աշակերտը երազում:**

ա) Որովհետև դասն անհետաքրքիր է:

բ) Որովհետև թեման չափազանց պարզ է:

գ) Որովհետև նա շատ է սիրում թվաբանություն առարկան:

դ) Որովհետև նա ուզում է ճանաչել աշխարհը:

(1) **40. Ըստ տեքստի՝ թվարկվածներից ո՞րն է բնութագրում հայրենի տունը:**

ա) Հայրենի տունը ժանգով ու փոշով ծածկված մի վայր է:

բ) Հայրենի տունը մարդու հասունացման հետ մոռացության է մատնվում:

գ) Հայրենի տունը տաղտկալի է իր լռությամբ ու անփոփոխությամբ:

դ) Հայրենի տունն իր մեջ կրում է հերոսի անցյալն ու ապագան:

(1) **41. Տեքստից ելնելով՝ ի՞նչ է իրենից ներկայացնում «սուրբ բույրը»։**

ա) Այն անցյալի դրական հոգեվիճակները վերապրելու միջոց է։

բ) Այն արհեստականորեն ստեղծված հաճելի բուրմունք է։

գ) Այն երբեմնի ծիսական արարողությունների հետ կապված հուշ է։

դ) Այն հարազատ քաղաքի այգիների նուրբ բուրմունքն է։

(1) **42. Ինչպե՞ս է բնութագրում հեղինակը հայրենի քաղաքի երկինքը:**

ա) Այն գերակա է ամեն ինչի նկատմամբ:

բ) Այն զարդարված է գիշերային լուսատուներով:

գ) Այն խորհրդանշում է հեղինակի մենությունը:

դ) Այն հեղինակին տխրության է տրամադրում:

(1) **43. Ստորև թվարկվածներից ո՞րն է կիրառված փոխաբերական իմաստով:**

ա) «Անսպառելի ամենահարուստ վայր»:

բ) «Հազարավոր ուրիշ մարդիկ»:

գ) «Հյուսիսից հարավ գնացող գնացք»:

դ) «Սովորական ամերիկյան քաղաք»:

(1) **44. Ի՞նչ խորհրդանշական իմաստ կարող է ունենալ տեքստում գնացքի հայտնվելը։**

ա) Այն ակնարկում է հերոսի կոնկրետ ծրագիրը՝ ինչ-որ տեղ մեկնելու վերաբերյալ։

բ) Այն կյանքի ընթացքի և անդառնալի ժամանակի խորհրդանիշն է։

գ) Այն մարմնավորում է տեխնիկական առաջընթացն ու ուրբանիզացիան։

դ) Այն վտանգի խորհրդանիշ է, որը խաթարում է մարդու հանգիստը։

(1) **45. Ըստ տեքստի վերջին պարբերության՝ հայրենի տան հետ կապված պատկերը մինչև ե՞րբ է մնում մարդու երազներում:**

ա) Մինչև գնացք նստելը։

բ) Մինչև հայրենի տուն վերադառնալը։

գ) Մինչև մահ։

դ) Մինչև քնելը։

(5) **46. Դատողությո՛ւն արեք տեքստի բուն ասելիքի շուրջ և Ձեր դատողությունը հիմնավորե՛ք համապատասխան փաստարկներով:**

Նկատի՛ ունեցեք, որ 50 բառից պակաս պատասխանը չի ստուգվի: